

2017 թվականի ութ ամիսների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը

2017 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մամուլի ասուլիսը, նվիրված 2017 թվականի ութ ամիսների գործունեության արդյունքների ամփոփմանը: Ասուլիսին մասնակցում էին <<Վարդաձոր>> ամսաթերթերի խմբագիրը, Վայոց ձորի թեմի լրատվության պատասխանատուն, մարզում գործող <<ՀՕՄ>> բարեսիրական կազմակերպության, <<Եղեգնաձորի կանանց տարածքային ասոցացիա>> և <<Երիտասարդ ընտանիքի աջակցության կենտրոն>> հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2017 թվականին ուշադրության կենտրոնում է պահել մարզի համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնց մի մասի լուծման նպատակով ներառվել է հրատապ խնդիրների լուծման միջնաժամկետ ծախսային ծրագրերի 2017 թ.-ին իրականացվելիք աշխատանքներում: Մարզի սոցիալ-տնտեսական, առողջապահական և կրթական ոլորտներում տիրող իրավիճակը քննարկվել է մարզային ենթակայությամբ գործող կրթական և առողջապահական հաստատությունների տնօրենների և մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ոլորտի գործունեությունը համակարգող ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումներում: Քննարկումների արդյունքում նախանշվել են խնդիրների լուծման հնարավորություններն ու ուղիները և քայլեր են ձեռնարկել իրավիճակի բարելավման ուղղությամբ: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգման ջրի, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման և բնապահպանական այլ խնդիրների շուրջ:

2017 թվականի 8 ամիսների ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 978 քաղաքացիներ:

Հ. Սարգսյանը մասնակցել է ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿԶ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին, քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանում, ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

Վայոց ձորի մարզում ս/թ մարտի 10-12-ը անց է կացվել <<Բաց դռների օր>> առողջապահական միջոցառումը: Միջոցառման շրջանակում Երևան քաղաքից ժամանած առաջատար բժիշկ-մասնագետներ կատարել են ընդունելություն: Արդյունքում մարզում հետազոտվել է 1154 քաղաքացի, որոնցից 129-ը ուղեգրվել է Երևան, որից 38-ը վիրահատության ենթակա, 91-ը՝ կրկնահետազոտման ու կոնսուլտացիաների համար:

ՀՀ Կառավարության կողմից հայտարարված <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում մարզի բոլոր համայնքներում կատարվել են սանմաքրման, չնախատեսված տեղերում կուտակված աղբերի հեռացման աշխատանքներ, իսկ մայիսի 27-ին և հուլիսի 29-ին Վայոց ձորի մարզում կազմակերպվել են միասնական շաբաթօրյակներ: քննարկվել են

Եղեգնաձորի տարածաշրջանի համայնքների խոշորացման գործընթացի հետ առնչվող հարցերն ու լուծում պահանջող խնդիրները, ինչպես նաև այցելություններ են եղել խոշորացված Վայք և Չառիթափ համայնքներ և հանդիպում ունեցել համայնքների ղեկավարների և ավագանու անդամների հետ, քննարկել առաջիկա անելիքներն ու ծրագրերը: Հաշվետու

ժամանակահատվածում մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ ՎՁՄ 2017-2022 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև քննարկվել և հավանության արժանանալուց հետո ներկայացվել է մարզային ներդրումային շուրջ 32 ծրագիր: 2017թվականի

հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ՏԿԶ և ՀՀ առողջապահության նախարարների, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ ՏԿԶ փոխնախարարների այցերը Վայոց ձորի մարզ:

Կազմակերպվել է 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ ԱԺ հերթական ընտրությունը:

Համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Արտաքին հարաբերություններ

Մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին:

Կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով մարտի 24-ից 28-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի ղեկավար Ռաֆֆի Խաչատրյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանին, ինչպես նաև <<Որդեգրիր մի գյուղ>> և <<Ծագումը: Բացահայտում>> նախագծերի հեղինակ, Ավստրալիայի քաղաքացի, հայ ազգի բարեկամ Լեն Ուիքսին և քննարկել առաջիկա անելիքները:

Հունիսի 11-15-ը <<Էկորիս Նիդերլանդ Բի Վի>> ընկերության կողմից կազմակերպված ճանաչողական այցի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել է Նիդերլանդներում, որտեղ մասնակցել է Նիդերլանդների տարածքային զարգացման քաղաքականության պլանավորման, տարածաշրջանային մակարդակում նորարարության (էներգախնայողություն, խելացի զարգացում), տեղական կառավարման համակարգի վերաբերյալ թեմաների շուրջ կազմակերպված քննարկումներին:

Մարզի կենսագործունեության ոլորտներ

Բյուջետային հատկացումներ` 2017 թվականի ութ ամիսների ընթացքում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինանսավորումը կատարվել է 1507864.3 հազար դրամ, որից 1055763.5 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում:

Մշակույթի ոլորտին հատկացվել է 12436.9 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 2475.0 հազար դրամ: Մարզի 29 համայնքների բյուջեներին անրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 103.2 %-ով: ՀՀ 2017 թվականի ութ ամիսների պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան կազմել է 663203.9 հազ. դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2017 թվականին առաջին կիսամյակի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 50% չափով: Քանզի նշված համայնքները զազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Ութ ամիսների ընթացքում ընդամենը փոխհատուցվել է 18899.2 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 1600.0 հազ. դրամ, որը ֆինանսավորվել է 100%-ով:

Կրթություն

ՎՁՄ-ում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, որոնցում սովորում է 312 աշակերտ: Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Մարզի 50 դպրոցներում 2017-2018 ուստարում սովորում է 6368 աշակերտ, որից 685-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը: Առաջին դասարան են ընդունվել 663 երեխա: Ներառական կրթության ծրագրով կազմակերպվում է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 114 դպրոցահասակ երեխաների կրթությունը: Գործում են 25 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում, որտեղ ընդգրկվել է 151 երեխա: ՀՀ կառավարության որոշմամբ մարզի սոցիալապես անապահով, ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Առողջապահություն

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 611 706.1 հազար դրամ: Մատուցվել է 29007,8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից համավճար` 2510.0 հազ.դրամ:

-2017թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից 1-

ին ութ ամիսների ընթացքում մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետպատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 19 քաղաքացի:

Իսկ առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 32 մեծահասակ և 3/3 երեխա:

Սոցիալական ապահովության բնագավառ

2017 թվականի 8 ամիսների ընթացքում նպաստ է ստացել 1990 ընտանիք, որից ընտանեկան նպաստ 1520 և սոցիալական նպաստ 470 ընտանիք: Վճարվել է 462 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 160 ընտանիք, վճարվել է 14.8 մլն դրամ: Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որոնց 8 ամսվա ընթացքում վճարվել է շուրջ 3.3 մլրդ. դրամ կենսաթոշակ: Ավանդների փոխհատուցում է ստացել 151 մարդ, վճարվել է 26 մլն. դրամ: Մարզի ՁՏԿ -ներում 2017թ. 8 ամիսների ընթացքում գրանցվել է 1303 գործազուրկ, որից 226-ը տեղավորվել են աշխատանքի:

Գյուղատնտեսություն

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2017 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 525.8տ ազոտական, 8.8տ կալիումական, 7.1տ ֆոսֆորական, պարարտանյութեր, 45865լ դիզելային վառելանյութ, 3.05տ գարնանացան ցորենի, 32.558տ գարնանացան գարու, 0.115տ առվույտի, 0.02տ հնդկացորենի, 0.546տ սիսեռի և 2.096տ կորնզանի սերմացուներ:

2017թ.մարզի ընդհանուր ցանքային տաածությունը կազմել է 5172 հա, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 1680 հա-ով: Կատարվել է 2308 հա հունձ, արտադրվել է մոտ 3000տ հացահատիկ՝ միջին բերքատվությունը՝ 1 հա-ից՝ 13 ցենտներ: Համայնքներից արտահանվել է մոտ 250տ ծիրան, մոտ 300տ դեղձ: Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն: 2017թ. օգոստոսի 31-ի դրությամբ մթերվել է ընդամենը 500տ. պտուղ-հատապտուղ և բանջարեղեն, որից 140տ պտուղ-հատապտուղ և 360տ բանջարեղեն: Մարզում „Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության,, ծրագրում ընդգրկվել են մարզի 8 համայնքներ:2010-2017թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 55 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով:

2017 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19775 գլուխ անասուն՝ խոշոր եղջերավոր (5251), որից կովեր՝ 8419 գլուխ, մանր եղջերավոր՝ 16808, խոզեր՝ 2490 գլուխ, թռչուններ՝ 66706 թև և մեղվաընտանիք՝ 23189 փեթակ:

Արդյունաբերություն

2017թ. 1-ին կիսամյակում Վայոց ձորի մարզում թողարկվել է 8.0 մլրդ. դրամի արդյունա-բե-րա-կան արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3%:

-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքարդյունաբերության ծավալների աճով: Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (Ուրմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1400 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 29 համայնքներում: ՎՁ մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

2017 թվականի առաջին կիսամյակում 2016 թվականի առաջին կիսամյակի համեմատ մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվը ավելացել է 2100-ով կամ 11%-ով:

Քաղաքաշինություն

Հրատապ ծրագրով ՀՀ կառավարության 16.02.2017թ. N 153-Ն որոշմամբ Վայոց ձորի մարզպետարանին

հատկացվել է 320.0 մլն. դրամ, որը բաշխվել է թվով 29 օբյեկտների վրա: Կայացել են մրցույթները և հայտնի են շինարարական, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունները: Շինարարությունը ընթացքի մեջ է, իրականացվել է ընդհանուր ծավալի 80 % - ը, կամ 240.0 մլն. դրամ : Գյուղական

տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկի, ,Յաբիթաթ Ֆոր Յոլունենիթի Արմենիա հիմնադրամի և Եվրամիության միջև 2014թ. դեկտեմբերի 18-ին կնքված դրամաշնորհային ծրագրի, Վերջին Օրերի Սրբեր Բարեգործական կորպորացիայի, ,Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի միջոցներով իրականացվել են 531.53 մլն դրամի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգման, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, մուտքի պատուհանները փոխելու, մուտքի ջերմամեկուսիչ դռներ տեղադրելու, շենքերի ճակատային մասերում և մուտքերում արևային լուսատուներ տեղադրելու, ինչպես նաև փողոցային լուսավորության կառուցման աշխատանքներ: Համայնքային բյուջեով իրականացվել է 98.5 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

2017թ. ութ ամիսների ընթացքում մասնավոր ներդրումները կազմել է 1038.52 մլն. դրամ(հյուրանոցների, հանգստյան գոտիներ, ՀԷԿ-ի կառուցում): Ստեղծվել է շուրջ 195 աշխատատեղ:

Համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտներ

Մարզի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմում է 1 միլիարդ 809 մլն. դրամ, որից սեփական եկամուտներ՝ 716 մլն. դրամ, սեփական եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների 39 տոկոսը, իսկ մեկ շնչի հաշվով այն կազմում է 13700դրամ: 2017թվականին նախատեսվել է համայնքներին հատկացնել 995 մլն. դրամի չափով դոտացիա:

Առ 25.09.2017 թ.մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարողականը կազմել է 485.2 մլն դրամ կամ 93.0 տոկոս:

Աղբահանություն

„Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակներում մայիսի 27-ին և հուլիսի 29-ին կայացած համապետական շաբաօրյակների ընթացքում մարզում իրականացվել են ծավալուն աշխատանքներ: Այդ ընթացքում արձանագրված 129 աղբավայրերից 112 փակվել են: Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում մարզի 29 համայնքներից 14 համայնքների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կատարվում է „Եղեգնաձորի ԲԿՏ,, ԲԲԸ-ի կողմից, 7 համայնքներում աղբահանությունը իրականացվում է համայնքային ենթակայության կազմակերպությունների միջոցով, իսկ 8 համայնքներում աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանների միջոցով:

Մարզի 896 տնտեսվարող սուբյեկտներից աղբահանության համար կնքվել են 521 պայմանագրեր կամ 58.1տոկոսը: Մարզի համայնքներում բնակչության հետ կնքվել է աղբահանության 5392 պայմանագիր (առ 25.09.2017 թ). կամ 30.1 տոկոս: Պայմանագրերի կնքման աշխատանքները շարունակվում են:

Աշխատանքներ են տարվում գործող 13 աղբավայրերից ևս ութի փակման ուղղությամբ: Համայնքների խոշորացման գործընթացից հետո կստեղծվի 2 աղբավայր, արդյունքում մարզում կգործի 7 աղբավայր:

Ներդրումներ

Ընդհանուր առմամբ կազմվել ու տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 23 ներդրումային ծրագրեր 2 միլիարդ 384 մլն դրամ գումարով, որոնցից 8-ը 1 միլիարդ 616 մլն. դրամ գումարով հավանության է արժանացել կառավարության կողմից, դրանցից երկուսը՝ չրերի արտադրության (<<ԱԼ ՎԿՈՒՄ>> ՍՊԸ, տնօրեն՝ Խաժակ Օհանյան) և այծի կաթից պանրի արտադրության (<<ՈՍԿԵ ԱՅԾ>> ԱԶ, տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան) ծրագրերը 120 միլ. դրամով արդեն ֆինանսավորվել են:

Բնակչության զբաղվածության խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի <<Ամուլսարի>> ոսկու հանքավայրի շահագործումը: 2017 թ. հանքավայրում ներդրումները կազմում են

117 մլն ԱՄՆ դոլար, մինչև տարեվերջ այն կհասցվի 250 միլ. ԱՄՆ դոլարի: Այժմ հանքավայրում աշխատում է 1119 մարդ, որոնցից 535-ը Վայոց ձորի մարզից են:

Ընկերությունը մարզի համայնքներում իրականացրել է սոցիալական մի շարք ծրագրեր՝ 2017թ. մեկնարկել է Ջերմուկի պարկի հնգամյա պլանի իրականացման աշխատանքները, օգոստոս ամսին ավարտվել է Գնդեվազի ոռոգման ջրատարի վերանորոգման աշխատանքները, հունվար ամսից սկսվել են Վայքի հիվանդանոցի տեխնիկական հագեցվածության բարելավմանն ուղղված աշխատանքները:

Վայքի հիվանդանոցի տեխնիկական հագեցվածության համար ընդհանուր ներդրումների ծավալը 2017 թվականին կազմում է 96.300 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ: